



32(355)

31.10.2013

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՆՍՈՒՑ ՕՐԵՐ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 21-26-ը «Գանձասար» ճամբարում անցկացվեց ակումբային ճամբար-հավաք՝ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախաձեռնությամբ: Այն թվով երրորդն էր: Հավաքին սեբաստացիների կազմում մասնակցում էին Գեղարքունիքի և Տավուշի մարզերից ներկայացուցիչներ: Նրանց միացան նաև Ստեփանակերտի հ. 8, 11 ավագ և Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական և Ասկերանի ու Այգեստանի միջնակարգ դպրոցների աշակերտները, ինչպես նաև տանտերերը՝ Վանքի միջնակարգ դպրոցի ներկայացուցիչները՝ շուրջ 110 դպրոցականներ: Գանձասարի բացմանը ներկա էին կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, ԼՂՀ ԿԳ փոխնախարար Սիքայել Համբարձումյանը, Մարտակերտի շրջվարչակազմի ներկայացուցիչներ: Ներկայացված էին մի շարք ակումբներ՝ Էլո, անգլախոսների, ընթերցասերների, գիտակների, հայրենագիտական, հեռադիտակ, տնտեսագետների և այլն: Գանձասարի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Վանքի միջնակարգ դպրոցում: Հավաքի մասնակիցներին ողջունեցին կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սիքայել Համբարձումյանը: Նրանք կարևորեցին ակումբային ճամբարի նշանակությունը ոչ միայն գիտականության



առումով, այլև փոխադարձ շփումների, հարեմանաճանաչության տեսակետից: Նման միջոցառումները նպաստում են խորանալու նախասիրած մասնագիտության մեջ, մարդկային

հարաբերություններում, սիրել հայրենիքը, գնահատել ընկերությունը, բարեկամությունը: «Պիտի ճանաչես, որ սիրես». այս կարգախոսով են առաջնորդվում ակումբային հավաքի

մասնակիցները: Հենց այս բանի գիտակցումով էլ սեբաստացիները, ընդլայնելով իրենց շարքերը ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի դպրոցականներով, շրջագայելով ծանոթանում են հայրենի բնաշխարհին, նրա բնական ու մարդկային պաշարներին, համապատասխան ակումբային ուղղությամբ աշխատանքներ տանում: Հարկ է նշել, որ «Գանձասարը» չտեղավորեց բոլորին, և նրանց մի մասը հյուրընկալվեց Վանք գյուղի իրենց հասակակիցների ընտանիքներում, որը նույնպես լավ առիթ էր վայելելու արցախցու հյուրասիրությունը, մոտիկից ծանոթանալու նրա նիստուկացին: Երեխաներն այցելեցին Իվանյանի տանկային գունդ, որտեղ ծանոթացան զնդի առօրյային, հանդիպում ունեցան ԼՂՀ Պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի հետ:

Աշանային արձակուրդներն այդպես նպատակալաց և բովանդակալից անցկացրած դպրոցականները նոր լիցքերով լծվեցին ուսումնական գործընթացին՝ ակումբային հավաքներից ստացած տպավորությունները խթան դարձնելով ուսման մեջ հաջողություններ ձեռք բերելու գործում:

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ԿԱՏԱՐՈՒՄ Ե ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



2014թ. սեպտեմբերին իր դռները կբացի Դիլիջանի միջազգային դպրոցը: Օրերս Արցախում էր դպրոցի զարգացման գծով տնօրեն Զարմինե Զեյթունցյանը, ում հետ ունեցած զրույցից ստացանք հետևյալ տեղեկությունները:

Դպրոցը նախատեսված է ավագ և միջին դպրոցի 650 աշակերտի համար: Առաջին տարում ընդունելու թյուն կկազմակերպվի ավագ դպրոցի 90 աշակերտի համար:

Քանի որ ուսուցումն այստեղ միջազգային ուսումնական ծրագրով է, որը կոչվում է միջազգային բակալավորիատ՝ երկու տարվա ծրագրով, երեխաները կարող են լինել 16 տարեկան և բարձր: Ընդունելությունն սկսվում է այս տարվա նոյեմբերից, և այն երեխաները, որոնց 15 տարին լրանում է այս տարի, կարող են դիմել դպրոց ընդունվելու համար:

Այս դպրոցի առավելությունն ու հնարավորությունն այն է, որ արտասահմանում ցանկացած բուհ ընդունվելիս նրա միջազգային բակալավորիատի դիպլոմն անցնում է:

Դպրոցը տալիս է նաև հանրակրթական ավագ դպրոցի ատեստատ, որպեսզի եթե երեխան ցանկանա Հայաստանում շարունակել ուսումը, ունենա այդ հնարավորությունը:

Կրթությանը դպրոցական մեծ համակիր է: Այնտեղ երեխաները կապրեն հանրակրթականներում՝ խիստ կարգուկանոնի պայմաններում: Դա-

ընթացները կանցկացվեն կենտրոնական ակադեմիական շենքում: Կան նաև արվեստի, երաժշտության, դիզայնի, տեխնոլոգիաների ու սպորտային թևի (վոլեյբոլ, բասկետբոլ, լող և այլն) խորացված դասարաններ: Շուտով կկառուցվի բեմարվեստի կենտրոն, որը կլինի լավագույններից մեկը տարածաշրջանում:

Ծրագիրը բարեգործական է. նախագիծը հիմնադրվելու է նախատեսված գործարարներ և բարերարներ Ռուբեն Վարդանյանը տիկնոջ՝ Վերոնիկա Զոնաբեդյանի հետ, Գագիկ Աղիբեկյանը, Դանիել Խաչատուրովը, Վլադիմիր Ավետիսյանը: Հիմնադրամին միացել են տարբեր երկրներից 93 դոնորներ՝ ոչ միայն հայազգի:

Դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներն են կրթության ոլորտի և բիզնեսի ակադեմիկոսները՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ճապոնիայից: Վերջերս դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ ընտրվեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փոխնախագահ և ֆինանսական տնօրեն Մանֆրեդ Շեֆերը: Բոլորը միավորվել են՝ շատ լավ հասկանալով կրթության արժեքը:

Ուսուցումը տարվելու է անգլերենով, քանի որ միջազգային բակալավորիատի ծրագիրն ունի ընդունված երեք պաշտոնական լեզու՝ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն: Կարող է այն թյուր տպավորություն ստեղծվել, թե Հայաստանում խթանվում է օտարալեզու կրթությունը: Զ. Զեյթունցյանի հավաստմամբ, դրա վտանգը չկա. եթե հայ երեխան 16 տարեկանում անգլերեն է սովորում, դա բացասաբար չի ազդում նրա մայրենի լեզվամտածողության վրա: Նա արդեն ձևավորված անձնավորություն է:

Կարևորը երեխայի մեջ հայրենասիրական ոգի դաստիարակելն է, որ նա գնա ուսում ստանա և վերադառնա կամ որտեղ էլ լինի՝ ծառայի իր հայրենիքին: Նա ասաց նաև, որ այդ դպրոցի նպատակը որևէ ձևով մեր կրթական համակարգին հակասելը

չէ և ոչ էլ հարուստների երեխաների համար էլիտար դպրոց ստեղծելը:

Աշակերտների մոտ 70%-ը լինելու է արտասահմանից, 10%-ը՝ Հայաստանից և 20%-ը՝ Հայկական սփյուռքից: Բնականաբար, հայագիտական բոլոր առարկաները կուսուցանվեն հայերենով: Այսինքն՝ դպրոցի նպատակը հայ երեխաներին ոչ թե օտարալեզու, այլ բազմամշակութային մթնոլորտում կրթություն տալն է: Նպատակն է, ինչքան հնարավոր է, դրսից շատ աշակերտներ ընդգրկել, որովհետև նրանք իրենց կյանքի կարևոր տարիները Հայաստանում անցկացնելով և մեր երկրի հետ անբաժանելի կապերով կապվելով՝ կդառնան Հայաստանի դեսպանները դրսում:

Դպրոցն ունի նաև ռազմավարական նշանակություն՝ Հայաստանը դնել համաշխարհային կրթական քարտեզի վրա: Եվ ինչու չէ, հայ երեխաներին, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ արտասահմանում, տալ այդ հնարավորությունը, որպեսզի նրանք կարողանան այդ բազմամշակութային քարտեզում ազատ շփումներ ունենալ: Դիլիջանի միջազգային դպրոցը միացել է համաշխարհային միացյալ քոլեջների ցանցին (UWC): «Մենք միայնակ դպրոց չենք, համաշխարհային դպրոցական ցանցի մի մասն ենք», - ասաց Զ. Զեյթունցյանը: 1970-ական թվականներից այդպիսի դպրոցներ են գործում աշխարհի 12 երկրներում՝ ԱՄՆ, Անգլիա, Սինգապուր, Գերմանիա, Իտալիա, Հնդկաստան, Հոլանդիա, Կոստա Ռիկա և այլն: Երեխան հնարավորություն ունի սովորել ոչ միայն Դիլիջանի, այլև թվարկյալ դպրոցներից մեկումնեկում:

Դպրոցում սովորելու մեկ տարվա արժեքը կկազմի մոտ 30 հազար դոլար, սակայն աշակերտների 90%-ը կսովորի անվճար: Դպրոցն ունի կրթաթրշակների լայն ծրագիր: Ուսման, ապրելու, դասագրքերի, սոցիալական ամբողջ վարձը կհոգա Հիմնադրամը:

Դպրոց ընդունվելը որևէ կերպ կախված չէ ծնողների նյութական վիճակից:

Ընդունելությունը կսկսվի նոյեմբերի կեսից:

Հայաստանից և Արցախից այս տարի պետք է ընդունվեն 10 հոգի: Կլինի խիստ մրցույթ, բայց ոչ քննություններով, այլ՝ բանավոր գրույցների, քննարկումների, որոշակի թեմաներով փոքրիկ շարադրությունների ձևով: Առաջին փուլում երեխաները դիմումները կուղարկեն դպրոց: Դիմումի ձևերը կան դպրոցի կայքէջում (www.dilijanschool.org): Ընտրված երեխաները հունվարին կանցնեն երկրորդ փուլ: Կապահանջվեն նաև դպրոցի գնահատականները՝ երեխաների առաջադիմությունն իմանալու համար և երկու երաշխավորագիր. մեկը դպրոցի ուսուցիչներից մեկից, մյուսը՝ արտադասարանական միջավայրից (կարող է լինել ուսուցիչ, ընկեր): Կընդունվեն բազմակողմանի զարգացած, լայն մտահորիզոն ու աշխարհայացք ունեցող երեխաները:

Աշխարհում շատ ընդունված են գիշերակացով դպրոցները՝ գիշերօթիկները, ուր ծնողները երեխաներին հաճույքով են ուղարկում, քանի որ այդ դպրոցներում կարգապահությունը շատ ավելի ուժեղ է: Դա շատ կարևոր է հայ ծնողների համար, որոնք հաճախ կարծում են, որ եթե երեխան հեռու է իրենցից, կարող է վատ ազդեցության տակ ընկնել: Այդ դպրոցներում այնքան խիստ է կարգապահությունը, որ ծնողները կարող են հանգիստ լինել իրենց երեխաների համար:

Միջազգային դպրոցի ծրագիրն առաջացել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ մարդիկ սկսեցին տեղաշարժվել տարբեր երկրներ: Նպատակն էր ստեղծել միասնական կրթական համակարգ, որպեսզի երեխան իր երկիրը վերադառնալով՝ կարողանա շարունակել ուսումը բուհում: «Մեր հիմնական նպատակը շնորհալի, տախանդավոր, նպատակալաց երեխաների կրթությունն է՝ համաշխարհային կրթական դաշտում իրենց ընտրությունը կատարելու: Նպատակադրվել ենք մոտակա 20 տարում այս դպրոցը դարձնել աշխարհի 50 լավագույն դպրոցներից մեկը: Ծրագիրը շատ ամբիցիոզ է, քանի որ դպրոցներ կան, որ 150 տարում են այդպիսին դարձել: Հայաստանի վարկաբեկը կբարձրանա այս կրթօջախով», - ասաց դպրոցի ներկայացուցիչը:

Նա որպես օրինակ բերեց հետևյալ փաստը: Այս ամառ Դիլիջանի միջազգային դպրոցը հյուրընկալել էր միացյալ համաշխարհային քոլեջների 14 ազգության 30 աշակերտների: Երկու շաբաթվա ընթացքում նրանք ուսումնասիրեցին հայոց պատմությունն ու մշակույթը: Չինացի մի աղջիկ այսօր ավարտական աշխատանք է գրում Հայոց ցեղասպանության մասին, իսկ մի չինացի տղա էլ հայերեն է սովորում: Բոլոր երեխաները հայկական պարեր են սովորել:

Հիմնադրամի կարգախոսներից մեկն է՝ «Մենք պետք պահենք, արժուրենք մերը ու նայենք դեպի ապագան»: Ոչ ոք չի ասում, թե պետք է մեր անցյալը, մեր ժառանգությունը մոռանանք: «Նմանիկը ճիշտ կերպով աշխարհին համահունչ քայլելու մեջ է: Իսկ դրա համար պետք է նաև ճանաչել աշխարհը: Մենք այդ ճանաչելու հնարավորությունը մեր երեխաներին տալիս ենք», - պարզաբանեց Զ. Զեյթունցյանը:

Աշակերտների առավելագույն 650 բանակը կլինի մինչև 2023 թվականը:

Այսօր դպրոցի տնօրեն է նշանակված Լոնդոնի արքայական քոլեջի 25 տարվա փոխտնօրենը՝ Զոն Փաղճուրը, որը տեղափոխվելու է Դիլիջան: Դասավանդողները սկզբում կլինեն օտար երկրներից, որովհետև Հայաստանում քիչ են միջազգային բակալավորիատի հավաստագիր ունեցող մասնագետները: Ժամանակի ընթացքում կպատրաստվեն տեղական կադրեր:

Ապագայում Դիլիջանի միջազգային դպրոցը նախատեսում է կատարել նաև 13-16 տարեկան դիմորդների ընդունելություն՝ միջնակարգ և ավագ դպրոցական կրթության միջազգային ծրագրերով:

ՕՐԱԳԻՐ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԱԿԵՐՏ-2013

Սովորողների ուսուցման ու կրթական համակարգի խնդիրներն ամբողջությամբ եղել է մտնում են մեր երկրի, մեր ժողովրդի ու պետության գերակա խնդիրը, քանի որ այն ռազմավարական նշանակություն ունի, ինչն էլ տեղիք է տալիս նոր ճանապարհներ որոնելու գիտելիքների նկատմամբ աշակերտների լուրջ ու խոհեմ վերաբերմունքի խթանման համար:

Ահա այդ որոնումների ճանապարհին էլ ծնվեց «Լավագույն աշակերտ» մրցույթի անհրաժեշտությունը: Այս մրցույթը խթանում է, որ աշակերտներն էլ ավելի լավ սովորեն, աշխատեն ու հասնեն նոր բարձունքների:

Մրցույթի քաղաքային փուլն անց է կացրել քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժինը հոկտեմբերի 15-ին՝ Ա. Մեսրոպյանի ղեկավարությամբ: Մրցույթի անցկացման համար ստեղծվել է հատուկ հանձնախումբ:

«Լավագույն աշակերտ» տիտղոսի համար մրցման էին դուրս եկել հ. 3 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Անահիտ Բաբայանը (բազմակողմանի զարգացած աշակերտուհի), հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արման Ասրյանը (հակում ունի դեպի հումանիտար առարկաները), հ. 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը (ունի բարձր ինտելեկտ, ստեղծագործում է, ասմունքում, դաշնամուր նվագում և պարում), ֆիզմաթ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Բելա Սարգսյանը (մեծ սեր ունի թե՛ տեխնիկական և թե՛ հումանիտար առարկաների նկատմամբ, ակտիվորեն մասնակցում է օլիմպիադաներին, մրցույթներին, ին-

տելեկուտայ խաղերին, հաճախում է պարի և դաշնամուրի խմբակներ):

Ողջույնի խոսք ասաց քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանը:

Մրցույթն ընթացավ երեք փուլով, որոնք կրում էին «Ինտելեկտուալ մարաթոն», «Դե, մտածիր», «Շուու ծրագիր» խորագրերը:



1-ին փուլին աշակերտներից յուրաքանչյուրին տրվեց 10 հարցերից բաղկացած թերթիկ, որն աշակերտը պետք է լրացներ 10 րոպեի ընթացքում: Հարցերն ընտրված էին դպրոցական ծրագրից:

2-րդ փուլը բաղկացած էր 3 հարցից, որոնցով պիտի բացահայտվեին աշակերտի արագ կողմնորոշվելու հմտությունը և զարգացած աշխարհայացքը:

Մրցույթի վերջին փուլը, որը կոչվում է «Շուու-ծրագիր», ամենաիտաքրքիրն էր բոլորի կարծիքով: Այս փուլում լավագույն աշակերտը ցույց տվեց նաև իր հմտություններն ու կարողությունները տարբեր բնագավառ-

ներում, որում նրան սատարեց աջակից թիմը՝ առավելագույնը 5 հոգի: Մասնակիցները հանդես եկան հայրենասիրական, աշակերտական, ազգային նկարագրի, դաստիարակչական ու մանկավարժական նախադրյալների համադրման թեմատիկայով և գեղարվեստական ձևավորմամբ:

Հանձնախմբի կողմից արդյունքներն ամփոփելուց հետո հայտարարվեց Ստեփանակերտ քաղաքի «Լավագույն աշակերտ-2013»-ի անունը, որին արժանացավ Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11 դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը:

Հարկ է նշել, որ միջոցառումը կազմակերպված էր բարձր մակարդակով: Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից բոլոր մասնակիցներին տրվեցին թանկարժեք նվերներ, իսկ լավագույն ճանաչված աշակերտը պարգևատրվեց նաև պատվոգրով: Նշենք, որ 3-րդ փուլին բոլորն էլ լավ էին նախապատրաստվել: Հանձնախումբը բարձր գնահատեց 3-րդ դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանի ձեռքի աշխատանքները: Ուշադրության արժանի էր ֆիզմաթ դպրոցի աշակերտուհի Բելա Սարգսյանի ջուրբակի նվագը և անթերի պարը: 8-րդ դպրոցից Արման Ասրյանը հանդես եկավ երգով:

Մշակութային մատվ մրցույթին աջակցել է Ստեփանակերտի մշակույթի տունը (տնօրեն՝ Ռ. Ավանեսով):

ՆԵՒԼԻ ԴԱՆԻՆՑԱՆ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԳԱՆՁԱՍԱՐՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մեր անգլիացի հյուրը

1 թ Յուկոնտների 23-ը անգլիախոսների ակումբի համար բացառիկ հետաքրքիր օր էր: Վաղ առավոտյան ոտքով Գանձասար բարձրացավ մի չչտապող անգլիացի զբոսաշրջիկ: Ինձ համար դա ամենաուրախ անակնկալն էր, որ կարելի էր ստանալ ակումբների հավաքին, առավոտյան ժամը 7:30-ին, երբ մտածում էի, թե ինչպես եմ սկսելու այդ օրվա ակումբի աշխատանքը: Ասում են, անգլիացիներն ինքնամոռի, օտարների հետ չչփվող մարդիկ են: Մեզ բաժին հասած անգլիացին բոլորովին չէր համապատասխանում անգլիացու կերպարին, որի մասին նույնիսկ դասագրքերում է գրված: Անգլիական Լիդզ քաղաքի երիտասարդ ձեռնարկատեր Քեյթ Գրեգորին անգլիական նուրբ հունորով, կենսուրախ, շփվող, անընդհատ խոսող ու խոսակցությունն ուղղորդող անձնավորություն էր: Մեր անգլախոսների ակումբի անդամները Ստեփանակերտի ավագ դպրոցի սովորողների հետ մտո մեկ ժամ զրուցեցին Քեյթի հետ: Չորույցին մասնակցեցին նաև Նարեկ Սահակյանը, Դիանա Ջորոյանը և Գեղարվեստի ավագ դպրոցի անգլախոսների ակումբի անդամ Սեդա Մինասյանը, իսկ հետո միասին նախաձեռնեցին: Քեյթը մեզ միացավ նաև Վանք գյուղի դպրոցում, և մոտ 4 ժամ ամենախիսկական ակումբային աշխատանք արեցինք: Երևանում հնարավոր չէր լինի անգամ երազել այդ մասին: Կազմակերպեցինք քննարկում ապագա մասնագիտության ընտրության թեմայով, խոսեցինք արտերկրում կրթությունը շարունակելու առավելությունների և դժվարությունների մասին, մի քանի լեզվական խաղեր խաղացինք, իսկ վերջում Նարե Գրեգորիայանը, Աննա Մկրտչյանը, Եվա Մարկոսյանը դաշնամուրի նվագակցությամբ երգեցին անգլերեն երգեր: Քեյթը նկարահանում էր այդ անսպասելի համերգը և մեր ընդ մեր շրջվում իմ կողմն ու ասում. «Ի՜նչ հարշ էրեխաներ են»: Քեյթին ճանապարհեցինք Ստեփանակերտ ժամը 3-ին և վերադարձանք Գանձասար: Ճաշից հետո մեր ակումբը հյուրեր ունեցավ Գերմանիայից և Լեհաստանից: Փաստորեն Գանձասարի հյուրերը նաև մեր հյուրերն էին: Գերմանացիների հետ խոսեցին Եվա Մարկոսյանը, Աննա Մկրտչյանը և Անի Մանուկյանը: Նրանք ամուսիններ էին, և պարզվեց, որ կինը նույնպես մանկավարժ է ու աշխատում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ: Երբ ասացի, որ մեր դպրոցը նույնպես ուշադրություն է դարձնում ներառական կրթությանը, անթաքույց ուրախություն ասրեց: Նա վաթսուց տարեկան կին է և իր ամբողջ կյանքում աշխատել է միայն այդպիսի երեխաների հետ ու անչափ սիրում է իր գործը:

Երեկոյան անգլախոսների խումբը մասնակցեց Արման Երանոսյանի կազմակերպած՝ «Ուսերենի»-ն, թե անգլերենին տանք նախապատվությունը» թեմայով բանավեճին:



Գանձասարյան հավաքի չորրորդ օրը. ակումբների գործունեության ներկայացումը միջազգային դիտորդների առկայությամբ

Յուկոնտների 24-ը մառախլապատ, անձրևային օր էր, ու որոշվեց այդ օրը չգնալ Վանք գյուղը և նախաձեռնել հետո կազմակերպել ակումբների գործունեության ներկայացում հենց Գանձասարում: Միշա Ավրայանն իր սարքավորումներով շատ արագ ճաշարանը վերածեց ներկայացումների ցուցադրման սրահի: Նոր էին Ասկերանից եկած սովորողները սկսել իրենց ցուցադրությունը, երբ ինչ-որ մեկը ներս մտավ ու ասաց, որ երեք արտասահմանցիներ են եկել Գանձասար: Պարզվեց, որ նրանք Լոնդոնից եկած հինգ բան գիտնականներ են և Հայաստանում ու Արցախում քարանձավներ են ուսումնասիրում: Թեև նրանք չչտապող զբոսաշրջիկներ չէին, այլ իրենց ժամանակը շատ թանկ գնահատող գիտնականներ, համեմայն դեպս, համաձայնվեցին ներկա լինել մեր անգլախոսների ակումբի ցուցադրությանը և հաճելիորեն քարոզարար, երբ լսեցին մեր կայքի անգլերեն էջի մասին տեղեկատվությունը, որն անգլերեն ներկայացրին Աննա Մկրտչյանը, Եվա Մարկոսյանը, Նինա Հովհաննիսյանը, Հովհաննես Դավթյանը, Նարե Հովհաննիսյանը, Նելլի Հարությունյանը: Դեռ չէինք հասցրել ճանապարհել անգլիացիներին, երբ երկու ուրիշ զբոսաշրջիկներ մեզ ձեռքով արեցին: Երևի կարծեցին, թե մենք Գանձասարի վանական համալիրի աշխատողներ ենք: Մոտեցա նրանք, ու պարզվեց, որ նրանք Նոր Զելանդիայից են, դարձյալ՝ մանկավարժներ: Մեր անգլախոսների խումբը՝ որպես արդեն Գանձասարյան զբոսաշրջային գործակալության փորձառու աշխատակիցներ, արագ ցույց տվեց եկեղեցին, ու նորից իրավիճակը մեր ճաշարան: Ներկա լինելու ակումբների ներկայացումներին: Քանի որ նրանք մանկավարժներ էին, շատ շուտ հասկացան մեր ճամբարի գործունեության էությունն ու նպատակները: Այդ ժամանակ գիտակներն էին ներկայացնում իրենց ակումբը: Բոլոր հյուրերին տալիս էինք մեր կրթահամալիրի կայքի անունը և ասում, որ այն ունի նաև անգլերեն էջ՝ Միացյալ թագավորության դրոշի տարբերանշանով: Այդ ժամանակ ես մտածեցի, որ պետք է մեր կրթահամալիրի մասին պատմող մի փոքրիկ գրքույկ ստեղծել անգլերենով, որպեսզի կարողանանք տարածել մեր կրթահամալիրի մասին տեղեկատվությունը արտասահմանյան երկրներում:

Չորրորդ օրն ավարտվեց գիտակների ակումբի նախապատրաստած ինտելեկտուալ խաղով, որին մասնակցեցին բոլոր ակումբները:

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ՀՋՈՐ ՈՒԺ

Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ, երկիրը զարգանում է խելացի ու բանիմաց քաղաքացիների ջանքերով, հայրենիքի ու երկրի փառապանծ ապագան ուսումնասանելն ու հայրենասեր սերունդների ձեռքում է: Ազգային ոգով ու շնչով դաստիարակչական և ուսումնական գործընթաց իրականացնող հայոց կրթօջախներում աճում է գիտակից ու հայրենասեր սերունդ: Իսկ այդ սուրբ գործում մեծ է կրթօջախանդաստանի մշակի՝ ուսուցչի անխնայ ու բոլորակողմ աշխատանքը: Աշակերտների կրթության ու հայեցի դաստիարակության գործում պակաս կարևոր չեն ինտելեկտուալ խաղերը, իմացական ու ճանաչողական բնույթի տարբեր միջոցառումներ:

Բացառիկ դեր ունի Հայաստանի հանրային հեռուստատեսությունը՝ հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարը, որը պատկանում է «Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամին: «Հայ ասպետ» խաղի նպատակն է ՀՀ ողջ տարածքում և Արցախում ստեղծել մանկապատանեկան, երիտասարդական հայրենասիրական կազմակերպություններ, պատանիներին ու երիտասարդներին դաստիարակել համամարդկային և ազգային բարձր գարավարներով, ասպետական բարեկրթությամբ և ոգով, խթանել նրանց հայրենասերության բարձրացմանը, համահայկական միջոցառումների և հեռուստախաղերի միջոցով նպաստել աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայ պատանիների և երիտասարդների համախմբվածությանն ու հայրենասիրական իմացության զարգացմանը: 2013թ. ապրիլին Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ. 2 հիմ-

նական դպրոցն առաջարկ ստացավ մասնակցելու «Հայ ասպետ» հեռուստախաղին: Մայիսի 19-ին կայացավ հեռուստախաղի առաջին փուլը, որի ընթացքում դպրոցի թիմը ցուցաբերեց փայլուն գիտելիքներ հանձնարարված թեմաներից՝ մտքի գանձարան, գրականություն, պատմություն, ռազմի պատմություն, աշխարհագրություն, դասական երաժշտություն, տոներ և ծիսակարգեր: Իսկ



«Փափուռ» պարով ուղղակի հիացրին թե՛ փորձագետներին, թե՛ հանդիսատեսին: Վաստակած բարձր միավորների շնորհիվ թիմն իրավունք ստացավ մասնակցելու հեռուստախաղի կիսաեզրափակիչ փուլին, որը կայացավ հոկտեմբերի 19-ին:

Գովեստի և հիացմունքի խոսքերի են արժանի թիմի բոլոր անդամները, քանզի նրանք աշխատեցին ջանասիրաբար ու պատասխանատվությամբ բարձր զգացումով: Թիմի ավագ Նոնա Սարգսյանը՝ համեստ ու խելացի, Ալիսա Սարգսյանը՝ ուշիմ և բանիմաց, Երիկ Համբարձումյանը՝ ասպետական ու զուսպ պահվածքով, Ֆլորա Հայրապետյանը՝ ճարտար մտքով ու լեզվով, Արմինե Դարախանյանը՝ քաղցրահիշյուն ձայնով ու խելամիտ, Հարություն Հովհաննիսյանը՝

լրջմիտ ու խոհեմ, Երիկ Խաչատրյանը՝ բարեխիղճ ու պարտաճանաչ, Գոռ Մաթևոսյանը՝ հնարամիտ և ընդունակ: Ահա այն շնորհաշատ աշակերտները, որոնք իսկական արցախցուն հատուկ նվիրվածությամբ, համառությամբ ու մտքի ճկունությամբ, գեղեցիկ ու անաղարտ հայերենով արժանացան բոլոր փորձագետների գովասանքին (ստացան «Հայ ասպետ» խորհրդանիշը): Հոգեբույժ ու անբացույց հրճվանքով այս պատանիները լսեցին իրենց հասցեագրված դրական կարծիքները: Խոր գիտելիքների և այդքան խճելի պահերի համար նրանք երախտապարտ են ուսուցիչներին: Խմբի ղեկավար, աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Արզանուկյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Կարինե Իշխանյանը, պատմության ուսուցչուհի Ծովիմար Առստամյանը և պարուսույց, տանկային բրիգադի գինձառայող Շոթա

Ղազարյանը իրենց ջանադիր աշխատանքով պատրաստվեցին մրցույթին, սովորեցրին, հուսադրեցին ու հավատացին, որ հոգեպարար հպարտություն են ապրելու՝ սաների հաջողությունները տեսնելով, իրենց ցանած սերմերի պտուղները քաղելով: Ասում են՝ այն ուսուցիչն է երջանիկ, որի աշակերտները գերազանցում են իրեն: Ուրեմն, թող հայ աշակերտը կարողանա գերազանցել իր ուսուցչին, բարձր պահի նրա անունն ու պատիվը, հայրենիքի հզորացման ու շենացման վեհ գործում իր ներդրումն ունենա:

ԱՆՆԱ ԻՇԽԱՆՅԱՆ ԱՐԳՅ ԼՐԱԳՐՈՒՅՈՒՆ 2-րդ կուրս

ՈԱԶՄԱՐԱՅԻՆ ԱՄԻՐԱԿԱՆ

ՎԱՋԳԵՆԻ ԿՅԱՆՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԶԱՆԳԵՐԻ ՂՈ-



Այդ օրը մեզ համար պատմական էր: Պատմական այն առումով, որ մենք որպես պատմության մշտադարձ վկայականները Արցախյան պատերազմի նահատակ Վազգեն Աբրահամյանի հիշատակը հավերժացնող հուշաքար, որի համար երախտապարտ ենք մոսկվաբնակ Գ. Բաղդյանին: Ծակատագրի բերումով մենք՝ հայերս, հաճախ ենք նման արարողությունների բախտակիցը լինում: Ակամայից հիշեցի 1967 թվականին Մեծ Հայրենականում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանի բացումը:

Սովորում էի 8-րդ դասարանում և ծաղկեպսակ էի տանում իմ շատ հասակակիցների հետ միասին: Այն ժամանակ ժողովրդի տրամադրությունը այլ էր, սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ տոնական էր: Ես ակամայից զարմացած էի. չէ՞ որ զոհվածներին էին վերհիշել, և պահը պետք է որ վշտաբեր լիներ: Տարիներ հետո միայն զգացի, որ ժողովուրդը հեռավոր պիտեում գոհված անշիքին յուրայիններին դիմավորում էր իրենց ծննդավայրում, թեկուզ հուշարձան դարձած: Իմ գիտակցության մեջ դաջվեց մի հանգամանք ևս, այն, որ հայրենիքի համար զոհվածի շիրիմին լացել, աղի արցունքներ թափել այնքան էլ հարկը չէ մի ժողովրդի, որի պատմության բյուրավոր էջեր հենց հայրենիքի համար նահատակների արյունով են գրված: Ծակատագրի բերումով ես երկրորդ անգամ եմ հայրենիքի համար զոհվածի հուշարձանի բացմանը մերկա լինում: Այս անգամ ես պատիվ ունեմ իմ սաներից մեկի՝ Վազգեն Աբրահամյանի հիշատակը հավերժացնող հուշաքարի բացմանը հանդես գալ որպես հերոսության դաս վարող՝ լավ իմանալով, որ զոհվածներին պետք չէ դա երբեք, բայց ապրողներին, երիտասարդ սերունդն շատ է հարկավոր: Սովորական մահկանացու չէր Վազգենը, այլ հայրենիքի ազատությանը կյանքով հատուցած այր, ուստի արտասովոր փոխարեն հպարտ հիշեմք նրան:

Որքան ավելի ենք հեռանում այն հերոսական օրերից, այնքան ավելի խորն ենք գիտակցում ժամանակաշրջանի ճակատագրական, բախտորոշ լինելը ոչ միայն Արցախի, այլև համայն հայրենիքի համար: Ու տակավին ինձ թվում է, թե «հերոսություն», «խիզախություն», «անձնագոհություն» բառերն այն չեն, ինչպիսի պիտի մեր տղաների արարքը զմահատել: Գուցե մեր հարուստ ու ճոխ բառագանձարանից ինձ չի հաջողվում գտնել ավելի հարմար, ավելի դիպուկ բառեր՝ վերհանելու մեր սերնդի կատարած անհնարինը 1990-ականների առաջին շրջա տարիներին: Լավագույն գնահատականը նրանց՝ հայրենիքի հանդեպ կյանքով հատուցած, իմ կարծիքով, այն է, որ նրանք ինչ թողեցին գալիք սերունդներին՝ ազատ ու անկախ հայրենիք պահել-պաշտպանելն ու զորացնելն է:

Իմ շուրջ երեք տասնյակ սաներ Արցախյան գոյապայքարի առաջին իսկ օրից անդամագրվեցին հավաքագրվող ջոկատներին և փորձ չարեցին զորացրվել, քանի դեռ թշնամին լրիվությամբ չէր հաշտվել պարտության գաղափարի հետ:

1993-ին ռազմաճակատի ողջ եր-

կայնքով կատաղի մարտեր էին մղվում: Անհաջողություններից զգազգած թշնամին փորձում էր բեկուն մտցնել ռազմաճակատային գծում և զինուժի ու տեխնիկայի մեծ կուտակումներ էր կենտրոնացրել արևելյան և հյուսիսարևելյան հատվածներում: Ռազմաճակատի այս գծում մի զգալի հատված գտնվում էր Բերդաշենի, Աշախի, Եմիշ-ճանի ազատամարտիկների հսկողության տակ:

Մարզիլու գյուղի հյուսիս-արևելյան հատվածի դիրքերում էինք: Արտասահմանից լրագրողներ էին եկել դիրքերը՝ թարգմանիչների ուղեկցությամբ: Երիտասարդ դիրքապահների մոտ ես բավականին հասակով էի՝ բառասուն անց: Նրանցից մեկին, անկասկած, հետաքրքրեց իմ և տղաների տարիքային ակնհայտ տարբերությունը, ու խնդրեց պարզաբանել: «Սրանք բոլորն իմ սաներն են,- մատնացույց արի սպառազինված, դիրքերն աշակրորեն հսկող կորովի երիտասարդներին: Դաշտային այս դպրոցում հայրենասիրության դաս ենք սերտում, և ավելացրի հետևյալ բառատողը (ըստ Վ. Տերյանի), որ, ըստ իս, շատ տեղին էր.

Եվ լուսաբացին, որ հոգնած լինեն, Որ քնած լինեն թշնամուց խաբված, Արևածագի բույրերով արբած, Եչան, նրանց կանչեն, եղբայրներ, ելեք...

Չփոխեմ թարգմանիչը որքանով կարողացավ քառատողի եությունը հասցնել լրագրողներին, բայց որ նրանց լուրջ դեմքերին ժախտ գծագրվեց, մենք էլ նկատեցինք:

Տարիներ անց, երբ կրկին փորձ եմ անում իմ հայացքի առաջ տեսնել նրանց, ում մանկության, դպրոցական, երիտասարդական տարիների ուղեկիցն եմ եղել, սիրտս լցվում է երանությամբ: Ջրածանանակ սիրտս լցվում է անհուն թախիծով, երբ տասնյակ սաներիս մեջ փնտրում ու չեմ գտնում Վազգենին: Վազգենը ուշիմ, ժպտեղետ, խուհուն դեմքով երեխա էր: Դպրոցում աչքի էր ընկնում համեստությամբ ու աշխատասիրությամբ, անչափ հետաքրքրասեր էր, պարտաճանաչ ու ընկերասեր: Բարձր առաջադիմությամբ ավարտեց 8-ամյակը, այնուհետև՝ Մարտունու արհեստագործական ուսումնարանը: Չեք էր բերել տրակտորիստի մասնագիտություն: Խորհրդային տարիներին ծառայել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում՝ Ս. Պետերբուրգում, տանկային զորամասում: Ծառայությունը խորհրդային բանակում չէր ավարտել, երբ սկսվեց Արցախյան շարժումը:

Նամակներից մեկում գրել էր. «Ինչքան փորձ եմ անում համոզել հրամանատարներին՝ ժամկետից շուտ գործարկելու համար, այն հաշվով, որ իմ հայրենիքում պատերազմ է, ու ես այնտեղ ավելի օգտակար կլինեմ, չեմ համաձայնվում, նույնիսկ մտածել եմ փախուստի դիմել, սակայն բռնվելու և հայրենիքս ոչ պիտանի լինելու վախը ստիպում էր ավելի սթափ մտածել հարցին, այն է՝ օրեր համրել մինչև ծառայությունն ավարտելը»: Այդ օրն էլ չուշացավ, զորացրվեց՝ տանկիստի մասնագիտությանը լավ տիրապետած:

Չորացրվեց 1991-ի աշնանը և անդամագրվեց արդեն ձևավորվող մարտական ջոկատներին: Այդ տարիներին ռազմական տեխնիկային տիրապետող մասնագետների կարիք շատ էր զգացվում: Բանն այն է, որ մեր մարտական տեխնիկայի զգալի մասը թշնամուց ազդարված էր, և լուրջ անսարքություններ ունեին, ուստի շտապ վերանորոգելու և մարտական վիճակի բերելու համար մասնագետներն անգնահատելի էին: Վազգենը հենց այդպիսին էր, ուստի նրա հրամայելը միշտ պատրաստ էր անհրաժեշտության դեպքում գրոհել թշնամու դիրքերը:

1993-ի տարին մտնեմուն էր մայրամուտին: Բոլորի նման (չնայած պատերազմական ծանր տարիներին) Ռազ-

միկ և Գրետա Աբրահամյաններն էլ պատրաստվում էին դիմավորել Նոր տարին:

Չնայած ծնողները միշտ տագնապի մեջ են (երեք տղաները ռազմաճակատի առաջին գծում էին), Նոր տարուն տոնական սեղան կզցեն և ընտանիքով՝ 7 հոգով կցանկանան, որ այն լինի խաղաղության տարի: Սակայն Նոր տարին սևով սկսվեց Աբրահամյանների ընտանիքում:

Դեկտեմբերի 26-ին երրորդ պաշտպանական շրջանի թիվ 2 դիրքերում կրած խայտառակ պարտությունից հետո (դիրքերը հսկում էին Եմիշճանցի տղաները) մարտի դաշտում թողել էին շուրջ երեք տասնյակ սպանված և մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, կատաղած ազերական հորդաները երևալ օր հետո փոխելով հարձակման ուղղությունը, փորձ արեցին կորցրածը հետ բերել: Այս անգամ կատաղի գրոհ սկսեցին թիվ 10 դիրքերի ուղղությամբ: Թշնամին տանկերի, հետևակի մարտական մեքենաների աջակցությամբ լայնածավալ հարձակում սկսեց մի խումբ հայ զինվորների կողմից պաշտպանվող դիրքերի վրա: Դրությունը օրհասական էր, դիմադրությունը՝ անհուսալի: Գունարտակուն տագնապ հայտարարվեց, բայց հետևակը հազիվ կարողանար ժամանակին հասնել օգնության: Տանկային դասակը մարտական առաջադրանք ստացավ՝ շեշտակի գրոհել արդեն տղաների «քթի տակ» հայտնված թշնամու վրա: Երեք տանկերի միանգամից հայտնվելը մարտի դաշտում խուճապ առաջացրեց թշնամու դիրքերում: Նրա անկանոն մահանջը վերածվեց փախուստի. նա մարտադաշտում թողեց վառվող տեխնիկա, գրոհեց: Վազգենը փախչողներին հասնելու համար արագացրեց տանկի ընթացքը: Ջրահանեքեման կատաղի փնջոցով սլանում էր առաջ: Աշտարակից գնդապետը կարկուտ էր տեղում խուճապի մատնված թշնամու վրա: Խրանատներում, ի նշան հաղթանակի, տղաներն ուրախ գոռում-գոռում էին: Չենց այդ պահին մոտակա բաքստոնցից որոտաց թշնամու տանկը: Արկը, պարտությունների վրեժի թույլը կուտակված, պայթեց մեր տանկի աշտարակին: Տանկը ճակատից ուժեղ հարված ստացածի նման ցնցվեց, կանգ առավ ու մեկեն բռնակառվեց: Անձնակազմը զոհվեց: Նրանք իրենց անձնագոհ արարքով փրկեցին խրանատներում անասան դիմադրությունն ցույց տվող տղաներին, որոնց քիչ առաջվա ուրախությունը փարատվեց՝ տեղի տալով անհուն վշտի: Խիզախ տանկիստները զոհվեցին, երբ այնքան մոտ էր նոր տարին, որ պիտի դառնար հաղթանակի ու խաղաղության տարի...

Վազգենի հիշատակը հավերժացնելու համար նորակառույց դպրոցը կոչվեց նրա անունով՝ Վազգեն Աբրահամյանի անվան Եմիշճանի 9-ամյա դպրոց: Դպրոցում հատուկ անկյուն կա, որտեղ դրված են Վազգենի մեծադիր նկարը, անձնական իրերն ու փաստաթղթերը: Նկարի տակ՝ մշտական թարմ ծաղիկներ... Իմ տասնյակ սաների մեջ փնտրում ու չեմ գտնում Վազգենին: Բայց ծի՞շտ ասացի. ոչ՝ իհարկե. ամեն օր ես տեսնում եմ Վազգենին, փույթ չէ, որ նկարն եմ տեսնում ու իմ կյանքի մի քանի ժամն էլ անց եմ կացնում նրա անունը կրող կրթօջախում: Նա իր կյանքի 23 գարունները նվիրեց հայրենիքին ու դարձավ անմահ: Իմ խուճացող հիշողության ծալքերից փորձ արեցի վերհանել իմ սան Վազգենի հերոսական կերպարը, որ հայրենիքի ազատության համար մարտնչողի վառ օրինակ է:

Վազգենի կյանքը շարունակվում է մեր մշտաբար կրթական օջախի զիլ ու զնգուն գանգի հավերժական դղումն ընդ...

ՎԱԿԵՐԻ ԶԱՓՈՐՈՒՆԵՐ. ՄՆԻԹԱՐ ԴՊՐՈՍՅԱՆ

Արցախյան ազատամարտում նահատակված քաջորդիների հիշատակը հուշաքարով չէ, որ վառ է պահվում: Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ակունքներից մեկը հայրենիքի ազատության ու անկախության համար իրենց կյանքը չխնայած քաջորդիների կյանքի ու մարտական ուղին ուսումնասիրելն է, նրանց ընտանիքների հետ կապ ստեղծելը: Արցախի բոլոր դպրոցներում պատվավոր տեղում Փառքի սրահն է: Ավելին, յուրաքանչյուր դասարան կրում է որևէ զոհված ազատամարտիկի անուն: Վերջերս նման մի արարողություն տեղի ունեցավ Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հիմնական դպրոցում: 4-րդ «ա» դասարանը անվանակոչվեց դպրոցի շրջանավարտ, զոհված ազատամարտիկ Մխիթար Պողոսյանի (Սիգիյան) անունով: Դասվար Արզենտինա Առաքելյանի, զինղեկ Վարուժան Աղաջանյանի, ՄԿԱԳՏՏ Անահիտ Սարգսյանի ջանքերով չորրորդյանների կողմից պատրաստվել էր զեղեցիկ միջոցառում՝ նվիրված հերոսին:

Չոկտեմբերի 1-ին Մխիթարը կդառնար 39 տարեկան: Նա ապրեց ընդամենը 20 գարուն, բայց իր մեջ ամփոփեց մի ամբողջ ժամանակաշրջան: Ստեփանակերտի հ. 10 դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Արցախի պետական համալսարան: Սակայն հայրենի վտանգի մեջ էր, և նա շատերի պես գրիչը փոխարինեց զենքով՝ կամավոր զինվորագրվելով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերին՝ որպես հակատանկային կայանքի նշանառու: Այնուհետև դասակի հրամանատար է նշանակվել 71-րդ մոտոհրաձգային զուսմարտական, մասնակցել բազմաթիվ մարտերի: Ցավալի է, որ պատերազմի բոլոր փուլերով անցած մարտիկը զոհվեց հենց այն օրը, երբ թշնա-



մին, ծնկի գալով, աղերսեց զինադադարի պայմանագիր կնքել: Դա 1994թ. մայիսի 12-ին էր: Չոկվեց Մարտակերտի շրջանի Սեյսուլան գյուղի մոտակայքում մղված մարտերում: Չետմահու պարզակատրվել է «Արիության համար», «Մայրական երախտագիտություն» Արցախի քաջորդիներին» մեդալներով: Չանգուն է Ստեփանակերտի հուշահամալիրում:

Չերոսի հիշատակի խնկարկուն սկսվեց դպրոցի Փառքի սրահից, որտեղ կրթօջախի զոհված շրջանավարտների լուսանկարներն են: Չորրորդ դասարանցիները մեկ-մեկ մոտենալով՝ ծաղիկներ դրեցին: Նրանց հետևեցին մյուս ներկայները: Իսկ գրական-երաժշտական կոմպոզիցիա 4-րդ «ա» դասարանցիները ներկայացրին դպրոցի դահլիճում: Պետք է ասել, որ ծննդյան օրը նշելը առանց հերոսի ֆիզիկական ներկայության՝ տխրության ալիք չէ, որ սիրելի էր դահլիճում: Մխիթարը զարդարում էր միջոցառումն իր հոգևոր ներկայությամբ: Եվ պատճառը միայն վրանից ցուցադրվող նրա լուսանկարները չէին՝ մանկության, պատանեկության և կան մարտական ընկերների հետ, թեկուզ՝ սուղ: «Մենք հպարտ ենք, որ մեր դասարանը կրում է Մխիթար Պողոսյանի անունը և խոստանում ենք արժանի լինել այդ անունը կրելուն», - հնչում է երեխաների շուրթերից: Մխիթարի ծնողների արցունքամած աչքերում հպարտության արտահայտություն կար: Չերոս ծնած որդիների ծնողները նույնպես հերոսներ են: Ակամայից ուզում ես համբուրել նման որդի ծնած մորը, և ինչ լավ է, որ նման միջոցառումներում հիմնի պես է հնչում «Ով սուրբ մայրեր» երգը: Չանդեսին մեծ շուք տվեց դպրոցական Անդրանիկ Վերդյանը ինչպես այս, այնպես էլ հայրենասիրական մյուս երգերի կատարումներով: Ինչպես նաև՝ զինվորների կատարումները, որ գալիս են վկայելու դպրոց-բանակ կապի ամուր դրվածքի մասին:

Միջոցառմանը ներկա՝ ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գալյա Առտախյանը շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենությանը, միջոցառման կազմակերպիչներին և առանձնակի՝ 4-րդ «ա» դասարանցիներին (դասվար Ա. Առաքելյանի գլխավորությամբ)՝ զոհված ազատամարտիկին վերականգնագնելու համար: Դա առաջին խոշոր միջոցառումն էր՝ Մխիթար Պողոսյանին նվիրված: Գուցե թե պատճառն այն է, որ նրա մասին տեղեկությունները սուղ են: Դա էլ իր հիմքերն ունի. պատերազմի ժամանակ բոլոր մարտիկները չէ, որ հայտնվել են հեռուստաօպերատորների տեսախցիկում: Մխիթարը ծառայել է տիկին Գալյայի որդու հետ նույն 71-րդ գրոհային զուսմարտականում, որի առաքելությունն ինքնին պարզ է: ՉԼՂՄ նախագահի ակնարկը հասկանալի է. դասարանը, որը կրում է հերոսի անունը, պետք է լավ իմանա իր անելիքները՝ զնալ հերոսի հետքերով: Միջոցառմանը ներկա էին Մխիթար Պողոսյանի հարազատները, համադասարանցիները, մարտական ընկերները: Ասել է թե՛ կարելի է հերոսի մասին տեղեկություններ հավաքել նրանց միջոցով, և հաջող տարի՝ Մխիթարի ծննդյան 40-ամյակին ավելի հարուստ նյութերով ներկայանալ: Դա կլինի նրա հիշատակը վառ պահելու ամենլավ ձևը:

Եվս մի հանգամանք. այն պահին, երբ դահլիճում հերոսի հիշատակի արարողություն էր, նույն այդ ժամանակ առաջին դասարաններից մեկում (դասվար՝ Էլմիրա Չարապետյան) Մեարդյան այրուբեցի առաջին «Ա» տառի ուսուցմանը նվիրված հանդիսություն էր, որը խորհրդանշում է գիտելիքի աշխարհը թափանցելու առաջին քայլը, հայ մնալու ճանապարհը: Ահա գլխավոր պայմանը ազգի լինելության՝ հերոսականություն և գիտելիքներով օժտվածություն: Կարծում ենք, այս երկու դասը լավ է յուրացնում մատաղ սերունդը:

Լենոս ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. Եմիշճան

Սեփ. լրատվություն

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ ԲԱՅ ԵՐԿՆԵՔԻ ՏԱԿ

Երևան դարձած իմ էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք...

Ասում են՝ ի սկզբանե խոսքն էր և բանակա-
նության աղբյուրը՝ Աստուծո խոսքը, որ դարձավ
միտք ու գաղափար, արարչագործություն,
տիեզերք և մարդ: Ասում են նաև՝ լավ է մի ան-
գամ տեսնել, քան հազար անգամ լսել: Եվ ան-
սասարկ վերջը նշվածներին՝ Ստեփանակերտի Ա.
Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի տնօ-
րեն Լ. Պարոյանի մտադրությամբ որոշվեց, որ
դպրոցի մի խումբ աշակերտներ մեկնեն
Երևան՝ համայն հայության մայրաքաղաք:
Ճիշտ է, նրանցից շատերը մեկ անգամ չէ, որ
եղել են Երևանում, բայց որ լավագույնների
շարքում պիտի շրջեն Հայաստանի տեսարժան
վայրերով ու հուշակոթողներով՝ մեծ պատիվ
էր:

Մեկտեղման տասնհինգն արդ լուսաբաց
էր, արևոտ ու ոսկեշող, երբ դպրոցին մոտեցավ
հարմարավետ ավտոբուսը: Ամեն մեկն զբա-
ղեցրեց իր տեղը՝ սրտում բերկրանք: Երբ ավ-
տոբուսը շարժվեց, լսվեցին երեխաների ու-
րախ ճիչն ու հրճվածքը: Ժամերն անցնում էին
րոպեների պես, քանզի երեխաների հետ ինքը
էլ մանկանում են, և հոգիդ լցվում է խինդով՝ եր-
ջանիկ ու ժպտերես հայացքներ տեսնելիս:

Երբ երեխաների հայտնեցին, որ շուտով
կլինենք Պարոյար Սևակի տուն-թանգարանում,
նրանք շատ ուրախացան և սկսեցին արտասա-
նել իրենց սովորած բանաստեղծություններից
պատառիկներ. «Քիչ ենք, բայց հայ ենք», «Հա-
յաստան»... Իսկ ես վերհիշեցի սևակյան այս
ճշմարտությունը. «Հնարավոր չէ ոչնչացնել մի
ամբողջ ժողովրդի, եթե նա ինքը ինքնասպան
չլինի»: Սևա և տունը Պարոյար Սևակի. երկհար-
կանի, հարմարավետ... Նայում ենք մեզ ծանոթ
լուսանկարին, լսում նրա ձայնը. «Ասում են
ձյունը, երբ ես տեղում է ամառվա կեսին...»,
«Ո՛ր-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած...»: Իս-
կական համճար ես դու, Պարոյար Սևակ, հան-
ճար՝ ծնված սովորական մահկանացուների
մեջ, հանճար, որ առեղծվածային վախճան ու-
նեցավ... Տան մերձակա այգում մի խնձորենի
կար, այնքա՛ն բերքառատ, որ խնձորենի ծա-
րույթունից ճյուղերը գետնին էին գամվել:
Տիրոջ պես քաղցր էին ու անուշաբույր:

Շարժվեցինք առաջ: Շուտով հորիզոնում
նշմարվեց Արարատը, որի սպիտակափառ
լույս գագաթը տարին բոլոր փայլում է աղա-
մանդա ուրախ խաղով և ճերմակ-փիրուզ

շողեր նետում երևանի վրա: Ծեր նահապետի
խանդակաթ հայացքի տակ երևանն է՝ դաշտի
խորքում բացված արևածաղկի նման: Բոլորիս
հայացքները սևեռված էին Արարատին. թիկնել
էր երևանը Մասիսների՝ ուսերին առած հա-
վերժության ծիրանին:

Ասում են՝ Աստված մարդկանց սովել է ապ-
րելու տեղ, հող ու հողատարածք և ասել. «Եթե
կարող եք, Հայրենիք դարձրեք»: Մեր մայրերն
էլ զորավարներ են ծնել, որոնց արյան գնով
մեր բաժին հողատարածքը Հայրենիք է դար-
ձել: Պատմության դաժան քառուղիներում
միշտ էլ զորավարներ ենք ունեցել, բայց վազ-
գեն Սարգսյան զորավարը դարձավ Ամենայն
հայոց հավերժի սպարապետ: Լինելով նրա
տուն-թանգարանում՝ ես ընկնում էի մտքերիս
մեջ ու ասես սկսեցի գրուցել նրա հետ. «Դու՝
քաջարի Սպարապետ հայոց, Սպարապետ
վերջին հարյուրամյակի...», ո՛չ, վերջին հազա-
րամյակի երանելի մարտիկ, որ ոչ միայն ճա-
կատագրեր, այլև պատերազմ շահեցիր ու զեն-
քով նոր սահման քարտեզագրեցիր և ապացու-
ցեցիր, որ «այնտեղ է լույս սփռանքը սկսվում,
ուր վերջանում է ամեն մի հնար...»:

Ես համոզված եմ, որ այսօրվա մեր դասն
իսկական արհուրթյան դաս էր, և՛ որ մեր սանե-
րը կդառնան իսկական զինվոր մեր Սպարա-
պետի, մարտիկը նրա գաղափարների, գաղա-
փարախոսը նրա հավատի, սահմանապահը
նրա նվաճած, գանձապահը նրա իմաստուն
մտքերի, դրոշակակիրը նրա փառքի դավիճնե-
րի, սիրամբների, արիության, հայրենասիրու-
թյան:

Գլխիկոր էին մեր սաները՝ աչքերում թա-
խիծ: Նայելով նրանց՝ համոզվեցի, որ ճիշտ
ճանապարհին ենք կանգնած և, որ մեր երկրի
ապագան ամուր ձեռքերում է, քանզի մի սե-
րունդ, որը գնահատել գիտի, երբեք ձեռք բե-
րածը չի կորցնի:

Երբ հասանք Ա. Բլեյանի դպրոցը, արդեն
շատ ուշ էր, բայց արցախցիներին բարեկանը
մի խումբ ուսուցիչների ու աշակերտների հետ
ջերմ դիմավորեց մեզ ու տեղավորեց դպրոցի
հյուրատանը: Ի՛նչ մթնոլորտ, ի՛նչ հյուրասի-
րություն ու հարմարավետություն... Երկի բառե-
րը քիչ են այդ ամենը նկարագրելու համար:
Ճանապարհից հոգնած երեխաներն ընկնում է-
ցին փափուկ տեղաշորում և մուշ-մուշ քնեցին:

Նախաճաշից հետո շարժվեցինք դեպի
Սարգսյան պատ: Այն հարցին, թե ինչ է Սարգս-
յան պատը մեզ համար, մեր սաները պատաս-
խանեցին, որ այն մեր գորակալն ու մեր տարած
ամենափայլուն հաղթանակներից մեկն է մեր

պատմության ընթացքում, նաև այն կարևորա-
գույն իրադարձությունն է, որ վերականգնեց
մեր հավաքական ինքնավստահությունը, մեր
հավատը սեփական ուժի հանդեպ: Սարգսյա-
պատով սկզբնավորվեց Հայկական հարցի
լուծման նորագույն փուլը և հասցվեց Սևրի
պայմանագրի իրողությանը, որը դարձյալ մո-
ռազության մատնվեց մեր պատմության 20-րդ
դարի 70-ամյա խորհրդային հատվածում:

Հայոց պատմության դասերին աշակերտ-
ները շատ են խոսել էլ միաժամին Սայր տաճարի
Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մասին: Արդ հնա-
րավորություն ընձեռվեց սեփական աչքերով
տեսնել և լինել այդ սուրբ հողում: Մարմնովս
սարսուռ անցավ, երբ տաճար մտա. Լուսավոր-
չի սուրբ հոգին ամենուր էր, մեզ հետ: Հայերս
առաջիններից էինք, որ ընդունեցինք քրիստո-
նությունը, Հիսուսին, և մեր եկեղեցին Աստծո
տաճար լինելուց գատ՝ եղավ մեր ազգային գո-
յության հովանին: Եվ հպարտության վեհ մի
զգացում համակեց մեզ, որովհետև մեր երկիրն
առաջիններից էր, որ ծաղկեց երկրագնդի վրա
և առաջիններից էր, որ նվիրվեց Աստծուն, ու
հորդորեցինք մեր սաներին՝ լինել ճշմարիտ
քաղաքացի և ճշմարիտ քրիստոնյա...

Ասում են՝ «Հայաստանը թանգարան է բաց
երկնքի տակ», իսկական երկիր դրախտավայր.
սրանում համոզվեցին մեր սաները և՛ լինելով
Զվարթնոց տաճարում և հպարտացան, որ
հենց իրենք են տերը այս երկիր դրախտավայ-
րի ու ճանաչում են նրա ամեն մի թիզ հող,
ամեն նշանավոր քար... Հապա էլ ինչպե՛ս կա-
րող են սիրել, եթե չճանաչեն իրենց իսկ Հայրե-
նիքի արևելյան այս պատառիկը:

Եղանք եռաբլուրում, և մեր սաները երզնե-
ցին մեր մարտիրոսների առաջ, որ երբեք թույլ
չեն տա մեզ հետ վարվել այնպես, ինչպես 1915
թվականին ու դրանից առաջ, դրանից հետո...
Հայ ժողովուրդն այն չի խաբվի, քանզի ան-
վերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցու-
թյան վրայից և այսուհետև ապավինելու է
միայն իր սեփական ուժին: Մեր սաները յու-
րացրին կարևոր դասը՝ «Հաղթում է ուժեղը»:

1991թ. սեպտեմբերի 21: Երանելի օր: Ար-
դեն քսաներկու տարի է՝ մեր երկիրն ունի
ազատ, անկախ, ինքնիշխան կարգավիճակ:
Այս քսաներկու տարիների ընթացքում ունե-
ցանք անկախ երկրին բնորոշ քաղաքական
հաստատություններ, Սահմանադրություն, Հայ-
կական բանակ, որի անդամիկ փորձու-
թյունները պատկանեցին փառավոր հաղթանակ-
ներով: Դրա վառ վկան անկախ երկրի ազատ
քաղաքացիներն ենք: Եվ ահա երևանի

ՇՈՒՇԻՆ ԻՐ ՀՊԱՐՏ ԿԵՑՎԱԾՔՈՎ ՆԵՐԿԱՅԱՑԱԿ ԱՍԿԵՐԱՆՑԻՆԵՐԻՆ

Արցախի աշխարհն այն բացառիկ գեղատե-
սիլ վայրերից է, ուր այցելող ամեն ոք չի կարող
հեռանալ առանց խորը տպավորությունների ու
նորից վերադառնալու ակնկալիքի: Մի՞թե կա
մեկ ուրիշ գոյություն, որտեղ կարելի է
զնայվել այսպիսի չքնադ բնությանը, պատմա-
կան տեսարժան վայրերով, հինավուրց խաչ-
քարերով ու եկեղեցիներով, ճարտարապետա-
կան հուշարձաններով: Հիրավի, դա միայն մեր
երկիրն է: Երկիր, որն ունի անկրկնելի բնու-
թյուն, որտեղ մարդ մոռանում է հոգս ու դժվա-
րություն և հակվում դեպի լավ ու բարի: Իսկ
մեր ժողովուրդը... Մեր ազնվությունն ու համես-
տությունը, հյուրընկալությունն ու հյուրասի-
րությունը: Այդ արժանիքները միանգամայն գե-
րում են եկվորների սրտերը, միաժամանակ
պատասխանատվության մեծ զգացում առա-
ջացնում: Չէ՞ որ մեր սուրբ պարտականու-
թյունն է պահել ու պահպանել այն ամենը, ինչ
դարերի խորքից հասել է սերունդներիս: Մենք
պետք է ճանաչենք և հպարտանանք մեր ունե-
ցածով, ձեռքբերումներով, որոնք հայ ժողովու-
րի հարատևության հազարամյակների խոսուն
վկան են, որ հնուց ի վեր անցել է բազում փոր-
ձություններով՝ պահպանելով լեզուն, հավատը,
մշակույթը: Այդ ձեռքբերումները մեր ազգի
անցյալն են, ներկան ու ապագան:

Մյուս դասարանի աշակերտներն արդեն եղել
էին պատմական Դադիվանքում, Ամարասում,
Տիգրանակերտում: Դեռևս փոքրուց նրանց մոտ



նկատվում էր սեր դեպի գեղեցիկը, հիշարժանը:
Նրանք կազմակերպել են նաև բազմաթիվ շա-
բաթօրյակներ՝ հարազատ քաղաքի հիշարժան
վայրերը մաքրել և կոկիկ պահելու նպատակով:
Ինչ խոսք, այս մի էթնոլոգիային երեխաներն
սպասում էին ավելի սրտատրոփ ու խանդա-
վառ:

Ուղևորությունն սկսվեց Ասկերան քաղա-
քից: Խմբին ուղեկցում էին դասուղեկ էլմիրա Հա-
րությունյանը և պատմության ուսուցչուհի Գա-
յանե Մակյանը: Սկզբից այցելեցին Շուշիի
մուտքի մոտ կանգնեցված տանկ-հուշարժանը,
տանկը խփվել է քաղաքի ազատագրման հա-
մար մղված մարտերում: Երեխաները հարգանք-
քի տուրք մատուցեցին զոհված ազատամար-

տիկների անմար հիշատակին և ծաղիկներ դրե-
ցին հուշարժանին:

Այնուհետև նրանց առաջ ծառայող հայարտ
Շուշին՝ իր անմատչելի դիրքով ու վեհ կեցված-
քով: Երեխաները հնայած դիտում էին քաղա-
քի անառիկ բերդը ու պատկերացնում,
թե պատերազմների ժամանակ ինչպես
էին հայերը պաշտպանվել...

Իր անառիկ դիրքի շնորհիվ Շուշին
Մեծ Հայքի Արցախ նահանգի Վարան-
դա գավառի բնակիչների համար միշտ
էլ ծառայել է որևէ պաշտպանական ամ-
րություն, և իրեն ազգային պարսպա-
պատվելով՝ դարձել է Վարանդայի մելի-
քության նշանավոր բերդերից: Նրանք
այցելեցին Ղազանչեցոց Սուրբ Ամե-
նափրկիչ եկեղեցին: Աշակերտները քա-
ջատերյակ էին, որ Արցախյան պատե-
րագմի ժամանակ եկեղեցին վերածվել
էր ազդերիների զինապահեստի, իսկ այ-
սօր վերանորոգված է ու պատակառնալ
է սփռում շուրջը շուրջ: Նրանք մոմեր վա-
ռեցին ու աղոթեցին Աստծուն՝ խաղաղություն
բերել Արցախ աշխարհին ու համայն հայության:
Յետաքրքրությամբ ուսումնասիրում էին
եկեղեցու պատերը, նրբատաշ քանդակները և
հարցերով դիմում ուսուցչուհուն: Աշակերտնե-
րը, բերկրանքով լցված, շրջում էին քաղաքում,
հիանում նրա նորակառույց շենքերով, հնա-
գույն ճարտարապետությամբ: Սպարապետ
Վազգեն Սարգսյանի հուշարժանի մոտ խումբն
ամխոս կանգ առավ: Ամբաբույց մի հպարտու-
թյուն էր պատել բոլորին: Ամեն մեկը լռեցյալ
հարգում էր Հայոց սպարապետի հիշատակը,
հոգով խորքում հպարտանում նրանով:

Թեպետ երեխաներից շատերն առաջին
անգամ չէին Շուշիում, սակայն ուսուցչուհու

Ազատության հրապարակում ըմբռնվում ենք
Նունե Եսայանի հմայիչ կատարումները, նրա
հետ խանդավառվում...

Հետո մեր ավտոբուսը շարժվեց դեպի Ար-
տաշատ՝ խոր Վիրապ: Բարձրանում էինք դե-
պի բլրին ծվարած եկեղեցին, իսկ երեխաները
պատմում էին, որ Գրիգոր Լուսավորիչը Տրդա-
տի հրամանով խոր Վիրապ նետվեց, որտեղ
ապրեց տասներեք տարի: Մի այրի կին երա-
զում հրաման ստացավ, որ օրական խոր Վի-
րապ նետի մի նկանակ Այսպիսով, Աստծու
հրամանով Գրիգորը մնաց այնտեղ օծերի ու
կարիճների կողքին: Ու երբ կռապաշտ Տրդա-
տը խոզի կերպարանք ստացավ ու հասկա-
ցավ, որ իր փրկությունը Գրիգորի ձեռքերում է,
խիստ զարմացավ՝ նրան կենդանի տեսնելով:
Գրիգոր Լուսավորիչի աղոթքից հետո թագավո-
րը բժշկվեց: Ապա երանելիքն էլավ մեխանների
վայրը և այնտեղ եկեղեցու հիմքեր դրեց ու
Քրիստոսի փառքի սեղան կանգնեցրեց: Հետո
առավ աշխարհաբնակ գործը, իրեն՝ թագավո-
րին ու տարավ Եփրատ գետի ափը և այնտեղ
մկրտեց ամենքին հանուն Հոր և Որդու և Սուրբ
Հոգու:

Երբ մենք ավտոբուսում էինք, սիրտս ուրա-
խությանը լցվեց, որովհետև մեր ապագան
ամուր ձեռքերում տեսա՝ հավատով լեցուն:
Թեև ընդամենը երեք օր էր, ինչ կտրվել էինք
տուն ու տեղից, հասցրինք կարոտել բոլորին:
Ավտոբուսը շարժվում էր առաջ, իսկ մեր սանե-
րի երգերն ավելի էին թեժանում: Ամեն մեկն իր
տպավորություններն էր վերլուծում, լու-
սանկարներն էին իրար ցուցադրում: Արդեն
աղջամուղջ էր, երբ Շուշի հասանք: Շուշի, մեր
հինավուրց ամրոց-քաղաք... Մեր սաների հետ
սերտեցինք վերջին դասն այս, մեր մեծագույն
հաղթանակները մենք ձեռք բերում, երբ
մնում ենք ինքնուրույն, երբ ներքին հեղափո-
խական իրադարձությունների բովում մոռա-
նում են մեզ և մենակ թողնում:

Համոզված ենք, որ մեր սաների մեջ հավետ
կնքան արիության դասերն այս:

Օգտվելով առիթից՝ Ստեփանակերտի հ. 8
ավագ դպրոցի աշակերտական և ուսուցչական կո-
լեկտիվների և ծնողական հասարակության անու-
նից մեր երախտագիտության խոսքն ենք հղում
Ստեփանակերտի քաղաքապետ Ա. Գրիգորյանին
և քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժ-
նի պետ Կ. Մարգարյանին՝ այս մտահղացում
իրականություն դարձնելու համար:

**Կրթ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբեկ. հ. 8 ավագ դպրոցի
պատմության ուսուցիչ**

ՌԻՍՈՒՑԱՆ ՕՐԻՆԱԿ

ԹԵՄԱՏԻԿ ՆՅՈՒԹԻ ԽՐԱՏԱԿԱՆ ՈՒԺԸ

Կրթական չափորոշիչները, որոնք նախատեսված են դպրոցի կրտսեր օղակի համար, ներդաշնակվում են դասագրքային թեմատիկային: Եվ այստեղ պարզապես ուսուցչից պահանջվում է նյութը արժևորել, ստեղծագործական մոտեցումով ու մանկավարժական վարպետությամբ մատուցելու ունակություն: Իսկապես, թեմաների ճիշտ մատուցումից աշակերտների մոտ ձևավորվում են անձնային որակներ: Թերևս դա են վկայում ուսուցանվող նյութերից ստացած այն տպավորությունները, որոնք նրանց հիշողությունից երկար ժամանակ չեն գնում: Ավելին, որոշ դասագրքային նյութեր դառնում են կրտսեր դպրոցականի «մտահոգության» նյութ: Այս առումով հիշատակության արժանի է երկրորդ դասարանի «Տեսնես լավ է, թե վատ» բաժինը, որի բոլոր նյութերը ընտրված են մանկավարժահոգեբանական մեծ հմտությամբ: Ստորև ձեռ ուշադրության ենք ներկայացնում «Կապույտ տերևներ» խորագրով նյութի դասավանդման մոտեցումակա, որը խորապես հուզել է իմ սաներին, առարկայացվել նրանց մտապատկերում, երևակայության ու հիշողության մեջ: Նյութն իսկապես ունի խրատական մեծ ուժ, ուսուցանող ու դաստիարակող գործառույթ:

Գերիշխող առարկա՝ Մայրենի
Ինտեգրված առարկաներ՝ Երաժշտություն, Կերպարվեստ, Ես և շրջակա աշխարհը, Տեխնոլոգիա

Թեման՝ «Կապույտ տերևներ»

Նպատակը՝ Ուղղորդված ընթերցանության մեթոդի կիրառմամբ զարգացնել նոր նյութի վրա աշխատելու, վարժ, սահուն, ճիշտ, հասկանալի կարողությունները ընթերցանող վերարտադրելու, բնագրի շարունակությունը գուշակելու կարողությունը:

- Կարողանալ տրամաբանորեն շարադրել բնագրի հիմնական միտքը և դասողությունները անել դրա շուրջ:
- Գտնել կապեր տեքստի բովանդակության և սեփական կենսափորձի միջև:
- Լսել ընկերոջ խոսքը, բանավիճել, փաստարկներ ու հիմնավորումներ ներկայացնելով կարևորել բարոյական չափանիշները, ձևավորել արժեքային համակարգ:
- Ձգտել լինել աշխատասեր, ազնիվ, ընկերասեր, բարի...
- Աշակերտների մեջ ձևավորել մերժելի վերաբերմունք դասապարտելի առարկաների, բացասական որակների նկատմամբ:
- Ամրակայել «Առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր» և «Արմատ ու ածանց» լեզվական թեմաները:

Դասի կառավարումը.-
- Նախօրոք ձևավորված պատասխաններ.
- Ասացվածքներ, բարտեր խմբային աշխատանքների համար.
- Գունավոր տերևներ, մրգեր, բանջարեղեն.
- Տեսաերիզ, ծայրասկավառակ, համակարգ գիշեր.
- «Բաժինը» ամփոփիչ թեմատիկ նկարներ.

Դասի ընթացքը.- Խթանում.
Դասը սկսվում է տվյալ թեմային համապատասխան նշանաբանով:
Ընկերասեր թե լինե՞ք,
Հաջողության կիսանձեղ:
Ուսուցիչ - Արևը երկնքում արթնացել է
Եվ ձեզ երեխաներ, ժպտում է,
Աչիկները լուռ փակում ենք,
Թափկները դեպի երկինք բարձրացնում ենք.

Արևի շողիկը վերցնում ենք
Ու ձեռ սրտիկին սեղմում ենք:
- Դուք զգո՞ւմ եք նրա ջերմությունը (այո, իհարկե...):
- Սիրո՞ւմ եք արևոտ եղանակը:
- Կցանկանայի՞ք ընկերանալ արևի հետ: Ինչո՞ւ: (Լավում են տարբեր պատասխաններ):
- Իսկ ի՞նչ եք հասկանում ընկեր, ընկերություն, ընկերասիրություն ասելով:
- Ունե՞ք ընկերներ, ինչպե՞ս եք վերաբերվում նրանց հետ:
- Ի՞նչ պատմվածքներ գիտեք ընկերասիրության մասին («Վատ ընկերք», «Որ մեկս կամաչի», «Առյուծն ու շնիկը», «Ինչպես է շունը ընկեր որուն...»):
- Ձեզ դո՞ւր է եկել «Կապույտ տերևներ» պատմվածքը.
ա) Ի՞նչ խնդրեց Սոնան Անիին, ինչո՞ւ:
բ) Ինչպե՞ս վարվեց Անին:

գ) Մայրիկը թույլ տվե՞ց մատիտն ընկերուհուն տալ:
դ) Ինչպե՞ս պատճառաբանեց Անին:
ե) Ինչո՞ւ Սոնան հեռացավ առանց մատիտը վերցնելու (շարունակական հարցում, դերերով հարցում):

- Ի՞նչ շարունակություն կունենա պատմությունը:
- Ինչպե՞ս կվերնագրեիք:
Իմաստի ընկալում (նոր նյութի հաղորդում).- Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով.

1-ին կանգառ
Բարձրաձայն ընթերցանություն
Բառային աշխատանք (փոխգործուն նշանների կիրառում), լեզվական և տեքստային աշխատանքներ.
ա) Ինչպե՞ս վարվեց Անին:
բ) Ի՞նչ ասաց Անին Սոնային:
գ) Սոնան ի՞նչ պատասխանեց Անիին, ինչո՞ւ:
դ) Ի՞նչ վերնագիր կդնեիք:
(«Վիրավորված Սոնան», «Վատ ընկերք», «ժլատ Անին», ...)

2-րդ կանգառ
Բարձրաձայն ընթերցանություն:
Բառային աշխատանք, լեզվական աշխատանք, տեքստային աշխատանք:
ա) Դասի ժամանակ ի՞նչ հարցրեց ուսուցչուհին Սոնային:
բ) Ի՞նչ պատասխանեց Սոնան:
գ) Ի՞նչ ասաց ուսուցչուհին:
դ) Նոր վերնագիր:
(«Կապույտ տերևներ», «Ուսուցչուհու զարմանքը», ...)

3-րդ կանգառ
Բարձրաձայն ընթերցանություն:
Լեզվական աշխատանք, բառային ու տեքստային աշխատանքներ:
ա) Սոնան պատասխանե՞ց ուսուցչուհուն: Ինչո՞ւ:
բ) Ի՞նչ ասաց Անին:
գ) Լսելով Անիի պատճառաբանությունը՝ ի՞նչ ասաց ուսուցչուհին:
դ) Նոր վերնագիր:
(«Ընկերասեր Սոնան», «Գաղտնապահ Սոնան»,...)

- Ձեր կարծիքով, կատարվածից հետո Անին կուղի՞ իր փառը, թե՛ կձնա Մույս ժլատ ընկերուհին:
- Ի՞նչ է ուսուցանում պատմությունը:
- Կարո՞ղ եք ըստ նշված վերնագրերի ամբողջացնել պատմվածքը:
- Ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Կապույտ տերևներ»:
- Պատմությունը ի՞նչ ասացվածք է ձեզ հիշեցնում:
Ընկերը փորձանքի մեջ է ճանաչվում:
Քեզ նեղ արա՞ ընկերոջդ տեղ արա:
Աջով տուր, որ ձախով առնես:
Ոչ քո գանձն է ընկեր, այլ ընկերն է գանձ:
Նա չէ ընկերը, ով խղճում է, այլ նա՞՝ ով օգնում է:

Ընկեր չունեցող մարդը անթև թռչուն է:
Շորի նորն է լավ, ընկերոջ՝ հինը:
Ընկեր բառի ստուգաբանությունը. ըն(դ) + կեր = ընկեր (միասին ուտել): Աշակերտներին հիշեցնել ընկեր բառի բացատրությունն ու նշանակությունը: Կենդի դիպրոմի մեթոդով կատարել ընկերների բնութագրում:

Անի	Սոնա
ժլատ	բարի
նախանձ	ընկերասեր
չար	մտերիմ
աչքածակ	գաղտնապահ

Երաժշտական դադար
Դասի մեթոդական ու քերականական կառույցը կարելի է համալրել համագործակցային խմբերով աշխատանքի միջոցով, որը կենդանի ու մրցունակ է դարձնում դասի ամբողջ ընթացքը:
Աշակերտները բաժանվում են 4 խմբի (նայած թվաքանակին), վիճակահանությամբ ստանում են քարտեր ու սկսում աշխատել դրանց շուրջ (կարելի է ընդգրկել նաև դասագրքի լեզվական կառույցի առաջադրանքները):
Հարցերը կարող են լինել հետևյալ կերպ.
1-ին խումբ
1. Կազմել բառակապակցություններ «տերև» բառով:
Առ. 3. Շարունակել՝ ձի-ձիավոր, թագ...
3. Կազմել տրված բառերի հակառակ զույգերը:
4. Բնագրից ընտրել ու՛հի- ածանցով վերջացող բառեր:

2-րդ խումբ
Կազմել հնգյակ ընկեր բառով:

3-րդ խումբ
1. Կազմել բառակապակցություններ ընկեր բառով:
2. Շարունակել՝ տերևներ - ինչե՞ր ընկերներ - Սոնա - կանաչ - խնդրել-ներկել-կապույտ-ուսուցիչ-

3. Առ. 2. Գտնել, թե որ արմատից են ծնվել հետևյալ բառերը՝ թագավոր, թագուհի, թագավորական...

4-րդ խումբ
Գրել ակրոստիքոս ընկեր բառով:
Աշակերտների ստեղծագործական աշխատանքներից
Ընկեր
Հավատարիմ, մտերիմ
Աջակցող, ձեռք մեկնող
Ուրախությունը կիսող
բարեկամ

Ընկերասեր ենք մենք իրավ, Նայեք ինչքան ենք ուրախ, Կատարելով աշխատանք, Երազում ենք խաղաղ կյանք: Բոլորները սկսանում, մենք էլ՝ հետը մեծանում: Շարունակվում է խմբային աշխատանքը (մրցության ձևով): Կատարում ենք փութացնող վարժություններ «Բառքանոցի խաղը», այս անգամ՝ ընկերություն բառով (խաղը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, օգնում արագ կողմնորոշվելուն, ինչպես նաև ստեղծում առողջ մրցակցային ոգի):
Ընկերություն - ընկեր, կեր, նյութ, թույն, ներկ, ութ, նյութեր, թույներ, նույն, թուր, ...
Կշարատուն (ամփոփում).- Ամփոփումը կարելի է իրականացնել քառաբաժանմամբ:
Ի՞նչ զգացիք.
Տիրություն, հիասթափություն, չարություն, վատություն:

Ի՞նչ տեսաք.
Անրի ժլատությունը, անխիղճ վերաբերմունք:
Ի՞նչ լսեցիք.
Ուսուցչի հորդորը, մոր խորհուրդը, Անրի պատճառաբանությունը:

Նոր վերնագիր.
Աջով տուր, որ ձախով առնես:
Համադասարանցիները, ժլատ Անին, Սոնան ու Անին:

Դասի ընդհանրացման ու ամրակայման նպատակով կարելի է վերհիշել «Պայման» բանաստեղծությունը («Ես և շրջակա աշխարհ»-ից):
Արի այնքան ծանոթանա՞նք, որ սկսենք մտերմանալ:
Չե՞տո այնքան մտերմանա՞նք, որ սկսենք ընկերանալ:
Չե՞տո այնքան ընկերանա՞նք, որ սկսենք եղբայրանալ:
Չե՞տո այնքան եղբայրանա՞նք, որ բաժանվել չկամենանք:
Ոչ խաղի մեջ, ոչ փորձանքում, Ոչ էլ ամբողջ, ամբողջ կյանքում:
Նորից անդրադառնա՞լ ընկերասիրության այդ կարևոր հատկանիշին՝ լսելով երեխաների կարծիքներն ու նրանց կյանքից բերվող կենդանի օրինակներ:
Աշխատանք համակարգիչներով (Լոգո կամ էսքիզ)

Աշակերտները պետք է նկարեն որևէ նկար, որը բնութագրի տեքստի բովանդակությունը (աշխատանքն իրականացվում է երաժշտության հնչյունների ներքո): Ապա կարելի է կիրառել «Շրջազայություն պատկերասրահում» մեթոդը, ստուգել աշակերտների կատարած աշխատանքները՝ լսելով նրանց մեկնաբանությունները:
Դասի վերջում կատարվում է խմբերի փոխադարձ գնահատում: Գնահատումը կատարվում է այնպես, որ հաղթում է սերը, համերաշխությունն ու ընկերասիրությունը:
Որպես տանյան աշխատանք՝ հանձնարարվում է գրել նամակ Անիին և խորհուրդներ տալ:
Տնային հանձնարարված նյութը ստուգվում է, և լավագույն մտուշներն ուղարկվում են «Լուսայգ»-ին: Այդպես էլ կարելի է հաղորդում ենք հրատապություն, արդիականություն ու կարևորություն:

խոսք հիշատակի

ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐԻ ԿԱՅԱՆՅԱՆ



Կան մարդիկ, ովքեր աշխարհ գալով, կշիռ են հաղորդում ժամանակին և իրենց ապրած կյանքով ու ծավալած գործունեությամբ, ստեղծած կերպարով ու կենսա ա գ ր ու թյամբ բարձր են կանգնում միջավայրից

ու ժամանակից: Այսպիսին էր նա՝ մասնագիտական ու ստեղծագործական ուժերի բուռն շրջանում մեզանից անժամանակ հեռացած, Արցախի ուսուցչության լավագույն մաթեմատիկոսներից մեկը՝ Արկադի Գրիգորի Կայանյանը:

Ծնվել է 1949 թվականի հունվարի 20-ին, Մարտակերտի շրջանի Ներքին Հռոնաթաղ գյուղում: 1957-1966 թթ. սովորել է Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում: 1966-1970 թթ. բարձրագույն կրթություն է ստացել Բաքվի մանկավարժական ինստիտուտում՝ ստանալով մաթեմատիկայի ուսուցչի որակավորում:

1973թ. աշխատանքի է անցել Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1975-ին աշխատել է Ստեփանակերտի երեկոյան հերթափոխի հ. 3 դպրոցում, 1981-1987 թթ.՝ Ստեփանակերտի հ. 1 միջնակարգում: 1992թ. գորակոչվել է Արցախի նորաստեղծ բանակի շարքերը և ծառայել մինչև 1994 թվականի մայիսը:

1997 թվականից սկսած՝ աշխատել է Ստեփանակերտի ԿԿԱՀ-ում՝ որպես մաթեմատիկայի կարիստի վարիչ, այնուհետև կրթության և գիտության նախարարությունում՝ որպես ծրագրամեթոդական վարչության մաթեմատիկա առարկայի գլխավոր մասնագետ, ապա վերականգնված կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես ծրագրամեթոդական և նախադպրոցական բաժնի գլխավոր մասնագետ: ԼՂԿրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության ավագ տեսուչի պաշտոնում աշխատել է 2007 թվականի հոկտեմբերից մինչև կյանքի վերջին օրերը:

Իր ողջ կյանքը նա նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, մասնավորապես մատաղ սերնդի մաթեմատիկական գիտելիքների ձևավորման ու զարգացման, դպրոցում մաթեմատիկայի դասավանդման դրվածքի բարելավմանն ուղղված աշխատանքներին: Անթերի տիրապետում էր առարկային, նրա դասավանդման մեթոդներին ու ձևերին: Ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու ուսուցիչների խորհրդատուն էր և ընդօրինակելի կերպար, որի մեջ խտացված էին ոչ միայն մասնագիտական արհեստավարժությունը, այլև մարդկային բնավորության լավագույն որակները:

Ծանրակշիռ է նրա ավանդը Արցախի հանրակրթական դպրոցներում մաթեմատիկայի դասավանդման դրվածքը գիտամեթոդական բարձր հիմքերի վրա դնելու գործում: Հմուտ մանկավարժի նրա կարողությունները լավագույնս դրսևորվել են ինչպես մաթեմատիկայի ուսուցչի, այնպես էլ կրթության պետական տեսչության ավագ տեսուչի պաշտոններում:

Նա իր վարքով ու կեցվածքով իր գործընկերներին դրոյում էր լինել ազնիվ ու շիտակ, համբերատար ու նվիրված: Լավ ամուսնու, ընտանիքի լիարժեք հոր, սիրելի պապիկի, իսկական մտավորականի կերպարը կշարունակի ազդեցություն ունենալ ինչպես ուսուցիչների, այնպես էլ գործընկերների ու հարազատների վրա:

Արկադի Կայանյանի կորստի ցավը ոչ միայն հարազատներին է, այլև բոլորին: Հիանալի մանկավարժի, սիրված մարդու, հարգելի գործընկերոջ պայծառ հիշատակը վառ կմնա բոլորիս սրտերում:

ԼՂԿրթության և գիտության նախարարություն

Լիանա ՃԱՏՐՅԱՆ
Ստեփ. հ. 12 հիմն. դպրոցի դասվար

ԱՅԼԱԶԱՍ

ԵՐԳԱՐՎԵՍԱԾ՝ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԴԵՄՊԱՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

«Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթն այս տարի Ռուսաստանի Դաշնության մի շարք մարզերում հանդես է եկել հյուրախաղերով: Կոռնեժ, Յարոսլավ, Ստավրոպոլ, Նովոսիբիրսկ, Տոմսկ, Խաբարովսկ... Սա դեռևս այն բոլոր քաղաքների ցանկը չէ, որտեղ արցախցի վարպետների կատարմամբ թևածել է ազգագրական երգը, թնդացել հայկական պարը՝ հուզելով ոչ միայն տեղի հայ, այլև օտարազգի բազմաթիվ հանդիսատեսների սիրտը:

Համույթի տնօրեն Սլավա Ապրեսյանը հայարտորեց ցուցադրում է պատվոգրերն ու դիպլոմները, որոնք համույթը ստացել է հյուրախաղերի ընթացքում: Բայց միայն շնորհակալագրերը չէ, որ վկայում են «Մենք ենք, մեր սարերը»-ի հաջող ելույթների մասին: Ս. Ապրեսյանի խոսքով, համարյա բոլոր դահլիճներում էլ կիսաճանրի ծափերն ուղեկցվել են... ուրախության արցունքներով: Հասկանալի է, հայրենաբաղձությունը հայրենիքից հեռու ապրող մեր հայրենակիցներից շատերին է մորմոքում, ուստի նմանատիպ միջոցառումներին նրանք չեն կարողանում զսպել հոգին պարուրած հույզերը: Բայց առկա է նաև հայ երգի հզոր ուժը, որ ինչպես եղել է միշտ՝ գերում է նաև

օտարներին: Արցախյան համույթի կատարումներին ռուսական մամուլի արձագանքները, տնօրենի մատուցմամբ, միանշանակ դրական էին, և նույնիսկ ավելին՝ սպասվածից ավելի էին գովազդվում: Ընդ որում, ազգագրերում նշվելով համույթի ազգային պատկանելությունը, պարտադիր շեշտվում էր նաև պետության անունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Հիշյալ պարագան էլ հենց առիթ դարձավ տեղաբնակ արքեպիսկոպոսի հերթական վայրահաչության: Այն, որ հայաստացիները հարևան Ադրբեջանի համար դարձել է պետական քաղաքականության բարդադրիչ, այլևս մեզ չի գարմացնում, բայց որ հազարավոր կիլոմետրեր հեռու՝ Ռուսաստանի ծայրամասում, ազերական ազգայնականության հունդերը կարող են դարձնել ծիլեր տալ, բանականության մեջ չի տեղավորվում:

Համույթն արդեն համերգներով հանդես էր եկել հեռավորարևելյան մի շարք քաղաքներում, և նպատակահարմար գտնվեց բարեգործական համերգ տալու նպատակով մեկնել Բլազովեչչենսկ: Համերգից ստացված հասույթի մի զգալի մասը պետք է տրամադրվեր ջրհեղեղից տուժած բլազովեչչենսկցիներին: Այդ կա-

պակցությամբ կար համապատասխան պայմանավորվածություն տեղական իշխանությունների հետ: Սակայն պարզվեց, որ տեղի արքեպիսկոպոսի համայնքին դուր չի եկել ԼՂՀ պետական համույթի նման նախա-

րումը հետևյալն էր՝ իբր գոյություն չունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անվամբ պետություն:

Կնճիռը հարթելու համար ստիպված միջամտեց Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՌԴ նախագահին կից Ազգամիջ-



ծեռնությունը: «Արագ» կոչվող ազգային-մշակութային ընկերության ղեկավար Ս. Ասկերովը նույնիսկ ավելի հեռուն գնաց՝ դիմեց դատախազություն, պահանջելով պատասխանատվության կանչել նախածեռնության հեղինակներին: Հիմնավոր-

վում Ա. Աբրահամյանը նամակով դիմեց Ամուրի մարզի նախագահ Ե. Կոժմեյակոյին, որում մասնավորապես նշելով «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթի ձեռնարկած բարեգործական ակցիայի մարդասիրական նշանակու-

թյունը, հույս հայտնեց, որ Ասկերովի գործողությունները անհրաժեշտ իրավական զնախատման կարժանանան:

Այդպես էլ եղավ. Ամուրի մարզի ղեկավարությունը տեղի չտվեց քաղաքական շանտաժին, իսկ ահա Ս. Ասկերովը ազգամիջյան երկպառակություն իրահրելու փորձի համար ենթարկվեց... տասնօրյա վարչական կալանքի:

Արվեստն իրոք սահմաններ չի ճանաչում: Իսկ արցախյան երգարվեստը տվյալ դեպքում յուրօրինակ դեսպան է, որ բեմարվեստի վարպետների միջոցով աշխարհին ականջալուր է անում ինքնիշխան, մշակութային ավանդույթներով հարուստ այս հայեցի երկրի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության մասին: Շատ կարևոր է, որ ԼՂՀ իշխանությունները, անձամբ հանրապետության նախագահը և մշակույթի ու երիտասարդության հարցերի նախարարը անհրաժեշտ պահին նեցուկ կանգնեցին համույթին: Նշանակում է, որ մեր պետականությունն անուր թիկունք ունենալով՝ միշտ էլ կարող ենք հաջողությունների հասնել արտերկրում Արցախը ներկայացնող բոլոր կարգի միջոցառումներում:

Կ. ՎԱՐԻՆԵՅԱՆ

ԱՅՔ, ԲԵՆ, ԳԻՄ...

Այս օրերին Արցախի հանրակրթական դպրոցների առաջին դասարաններում տեղի են ունենում բաց դասեր՝ նվիրված Հայոց այբուբենի առաջին տառի՝ Ա-ի ուսուցմանը: Նման դասեր տեղի ունեցան նաև Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին «ա» և «բ» դասարաններում:

Դասավարներ Ջարիգե Հարությունյանի և Դիանա Ղազարյանի բաց դասերին ներկա էին դպրոցի տնօրենուհիները, դասավարներ, ուսուցիչներ: Երեխաների ամբիջական և բավականին զարգացած բանավոր խոսքն ու մաքուր հայերենով մտքերի գեղեցիկ շարադրումը մեծ գոհունակություն պատճառեցին ներկայից: Չնայած նոր ուսումնականի սկզբից ընդամենը երկու ամիս է անցել, սակայն դասավարների համար ջանքերի շնորհիվ առաջին դասարանցիները բավականին գիտելիքներ են ձեռք բերել: Նրանք տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, գիտեն բառի, նախադասության կազմությունը, բառերը վանկերի բաժանելը: Կարողանում են միավանկ բառերում հնչյունը ձևափոխելով ստանալ այլ բառ, իրենց մտքերը շարադրել նկար-պատմությունների շուրջ ու վերնագրել դրանք:

Երկու դասարաններում էլ բաց դասերն անցան աշխույժ մթնոլորտում: Ակնառու էր դասավարների կատարած քրտնաջան աշխատանքը, ինչի արդյունքը հնչեց աշակերտների շուրթերից: Մեզ համար ուրախալի է նաև այն, որ երկու դասարաններում էլ շատ են ակտիվ երեխաները, և առհասարակ, դպրոց հաճախող երեխաների պատրաստվածության մակարդակը տարբերակի բարձրանում է, - ասաց դպրոցի տնօրեն Կառլեն Մայիլյանը:

Երեխաները բանաստեղծական տողերով փառաբանեցին Մեծն Մաշտոցին՝ Հայոց գրերը ստեղծելու ու դրա շնորհիվ մեզ հայ պահելու համար: Նրանց ամենը շուրթերից հնչեցին երախտագիտության խոսքեր Արցախյան ազատամարտում նահատակված քաջորդիների հիշատակին: Երեխաները խոստացան լինել նրանց արժանի հետմորդները և Մետրոպոլիտանի 39 զինվորների պես դառնալ ազգի փառահեղ պահապաններ: Դասապրոցեսում դասավարները երեխաների համար դուրընթեքներ էին բազում եղանակներ օգտագործեցին՝ նոր թեման նրանց հիշողության մեջ ամրապնդելու համար:

Հայոց այբուբենն է այն ոսկե բանալին, որով գիտելիքների դռներն են բացվում: Ամեն տարի Հայոց այբուբենը մեր մանուկներին սովորեցնելով՝ յուրաքանչյուր դասավար ցանկանում է, որ իր սաները մեծ բարձունքներ նվաճեն՝ չաղճատելով հայկական դիմագիծը: Քանզի բոլոր դպրոցի դիմակայելով ու բազում փորձություններ հաղթահարելով է մեզ հասել հայոց պատմությունը, գիրն ու գրականությունը: Դասավարները պատգամեցին իրենց սանիկներին աչքի լույսի պես պահել մեր սրբությունների սրբոց ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ:

Անահիտ ԳԵՏՐՈՍՅԱՆ

ՑԱՎԻՑ ԾՆՎԱԾ ԽՈՍՔԵՐ

Խորը ցավ ու կսկիծ պարեցին Ստեփանակերի հ. 7 հիմնական դպրոցի 2-րդ «է» դասարանի դասավար Սվետա Սողոմոնյանի անժամանակ մահվան կապակցությամբ: Նա ուսուցիչ էր իր ողջ երկրամասում, մտածողությամբ, աշխարհայացքով ու համոզմունքներով: Մանկավարժին բնորոշ լավագույն որակներից գատնեցությունը նրան օժտել էր շատ մարդասիրությամբ, շիտակությամբ ու բյուրեղյա մաքրությամբ: Երեխաներին էր փոխանցում ոչ միայն աշխարհը ճանաչելու գիտելիքներն ու անաղարտ մայրենին, այլև ազնվության ու մաքրության հունդեր սերմանում նրանց մեջ: Մանկավարժի հոգատարությանը միախառնված էր մայրական ջերմությունը, որով նա դարձել էր երեխաների համար շատ սիրելի կերպար:

Նա իր ապրած կյանքն ու գործունեությունը նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին՝ թողնելով բարի անուն ու լավ հիշողություններ:

Սվետա Սողոմոնյանի բարի անունն ու հիշատակը միշտ վառ կմնան նրա սաների ու նրան ճանաչողների հիշողության մեջ: Նրա կորուստը ոչ միայն իր ընտանիքի, այլև մեր ուսուցչության կորուստն է: Մենք՝ ծնողներս, խոր վշտակցություն ենք հայտնում մեր շատ սիրելի Սվետա Սողոմոնյանի ընտանիքի անդամներին ու հարազատներին, ուժ և կամք՝ դիմագրավելու այդ անսպասելի և խոր վշտին:

Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի 2-րդ «է» դասարանի ծնողական կոմիտե

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Հաղրուբի շրջանների հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար կազմակերպվող մրցույթների (2013-2014 ուստարի)

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

- 1. Ակնաղբյուրի մ/դ- օտար լեզու (անգլերեն)-20 ժամ
2. Աստղաշենի մ/դ- ֆիզիկուլտուրա-19 ժամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

- 1. Առաջածորի մ/դ-օտար լեզու (անգլերեն)-20 ժամ
2. Մոխրաբաղի մ/դ-դասվար-19 ժամ
3. Վաղուհասի մ/դ-հայոց լեզու-10 ժամ
4. Չափարի մ/դ-օտար լեզու (անգլերեն)-14 ժամ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

- 1.Մարտունու հ. 1 հոսք. մ/դ-ֆիզիկուլտուրա-6 ժամ, կերպարվեստ-2 ժամ
2.Չորավանի մ/դ-ֆիզիկա-4 ժամ, ինֆորմատիկա-6 ժամ, տեխնոլոգիա-4 ժամ, երգ-5 ժամ
3.Մարտունու հ. 2 հ/դ-տեխնոլոգիա-8 ժամ
4.Շարտարի հ. 3 հ/դ -ֆիզիկուլտուրա -15 ժամ
5.Օժվատեղի հ/դ ֆիզիկա-6 ժամ
6.Շեխերի մ/դ-քիմիա-10 ժամ, ֆիզիկա-15 ժամ
7.Ննգիի մ/դ-մաթեմատիկա-14 ժամ, ինֆորմատիկա-4 ժամ
8.Նորշենի մ/դ-ֆիզիկա-15 ժամ, ինֆորմատիկա-7 ժամ
9.Սարգաշենի մ/դ-ֆիզիկա-12 ժամ
10.Մաճկալաշենի մ/դ-երգ-2 ժամ

ՀԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

- 1.Ակնաղբյուրի մ/դ-աշխարհագրություն-8 ժամ
2.Առաքելի մ/դ -պատմություն -23 ժամ, քիմիա-7 ժամ
3.Արևշատի մ/դ-գիղերեկ-1 հասուիք, պատմություն -23 ժամ
4.Բանաձորի հ/դ-ռուսաց լեզու-11 ժամ, օտար լեզու (անգլերեն)-10 ժամ, ֆիզիկա-8 ժամ
5.Տողի մ/դ -ֆիզիկա-12 ժամ
6.Ուղտածորի մ/դ-ֆիզիկա-7 ժամ
7.Հին Թաղերի հ/դ-մաթեմատիկա -20 ժամ, ֆիզիկա-8 ժամ, Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի թիվ 25-26-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Չև 1),
2. Փաստթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատաս-

խան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Չև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր, ժամը 9:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից, համապատասխան դպրոցում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան նոյեմբերի 18-23-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ համադիր՝ ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՆՁԱՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Մտեփանակերտ, Գ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.10.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: